Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 157 - Ա
որոշման

# Ծ Ր Ա Գ Ի Ր

## «ԶԻՆՎՈՐԻ ՏՈՒՆ» ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԹՈՂՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԵԾԱՑՈՒՄ»

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Արովյան 58 հասցեում գտնվող «Զինվորի տուն» վերականգնողական կենտրոնի թողունակության մեծացմանն ուղղված անավարտ շինարարական աշխատանքների շարունակություն, 2 նոր մասնաշենքի կառուցում, կահավորում և զինում: Թողունակության մեծացման ծրագրի նպատակն է՝<br>1. Բարձրացնել շահառուներին տրամադրվող բժշկական օգնության որակն ու արդյունավետությունը<br>2. Միավոր ժամանակում սպասարկել առավել մեծ թվով շահառուների, որոնք ունեն վերականգնողական բուժման կարիք<br>3. Կազմակերպել շահառուներին տրամադրվող առողջապահական և աջակցման ծրագրերն առավել հարմար ու մատչելի պայմաններում<br>4. Ընդլայնել արդեն իսկ գործող ծառայությունները<br>5. Գործարկել նոր ծառայություններ՝ ամբողջացնելով վերականգնողական բուժման շղթան: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալվում է ծրագրի շրջանակներում օգտվել ՀՀ հարկերի գծով օրենքով սահմանված արտոնություններից: |

| | | |
|---|---|---|
| 3. | Բարեգործը | 1. «Ընտանիքի փրկության ֆոնդ» («Family Rescue Fund») հիմնադրամ<br>Հասցե՝ ԱՄՆ, Գլենդել, Հարվարդի փ. 105<br>Հարկային կոդ՝ 47-4095670<br>2. «Վեթերանս օֆ Արմենիա» (Veterans of Armenia)<br>Հասցե՝ 1146 N Գլխավոր պ. #684 Գլենդել Կ.Ա. 91202<br>Հարկային կոդ՝ 85-3766890<br>3. Հայ օգնության միություն<br>Իրավաբանական հասցե՝ Նալբանդյան 116/24<br>ՀՎՀՀ 01512885<br>4. Ուան Արմենիա բարեգործական հասարակական կազմակերպությունը<br>Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մելիք Ադամյան 2/2, 5-րդ հարկ<br>ՀՎՀՀ՝ 02622324<br>5. «Լիրա-Ա» բարեգործական հիմնադրամ (<<Лира-А>> Благотворительный фонд)<br>Հասցե՝ 142007, Մոսկվայի շրջան, ք. Դոմոդեդովո, Իլյուշկինի փ., տ. 2<br>Հարկային կոդ՝ 5009125444<br>6. Այլ ոչ առևտրային կազմակերպությունների և անհատների հանգամանակություններ |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Զինվորի տուն» բարեգործական հասարակական կազմակերպություն<br>Իրավաբանական հասցե՝ քաղ. Երևան, Աբովյան 58<br>ՀՎՀՀ՝ 00904586 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ, քաղ. Երևան, Աբովյան 58, առողջապահության բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն 780.000.000 դրամ է |
| 7. | Բարեգործությունն ստացողը | Ծրագրի շահառու են հանդիսանում զինվորական ծառայության ընթացքում վնասվածք, խեղում կամ հիվանդություն ձեռք բերած անձինք: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 10/03/2023 թ. – 10/03/2026 թ. |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Զինվորի տունն իրականացնում է թողունակության մեծացման ծրագիր, որի շրջանակում արդեն իսկ իրականացվել է առկա եռահարկ շինության հիմնանորոգում: Սույն ծրագրով նախատեսվում է շարունակել և ավարտին հասցնել որոշ անավարտ շինարարական աշխատանքներ և կառուցել ևս երկու նոր մասնաշենք:<br>1. Շինարարական աշխատանքներ - 600.000.000 դրամ<br>2. Վերազինում և կահավորում - 180.000.000 դրամ |

| | | |
|---|---|---|
| | | Միջոցառումները նախատեսված է իրականացնել 10.03.2023 թ - 10.03.2026 թ. |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1. Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում – 15,000,000 դրամ<br>2. Տեխնիկական վերահսկողության ծառայություններ - 20,000,000 դրամ<br>3. Շինարարական աշխատանքների մասով ծառայությունների մատուցման պայմանագիր – 565,000,000 դրամ<br>4. Բժշկական սարքավորումների ձեռքբերում - 100,000,000 դրամ<br>5. Կահույքի ձեռքբերում - 50,000,000 դրամ<br>6. Խոհանոցային տեխնիկայի ձեռքբերում - 30,000,000 դրամ |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի շրջանակներում համագործակցություն չի նախատեսվում: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեղանիզմների նկարագրությունը | 1. Օրենքով սահմանված կարգով տեղեկատվության ներկայացում ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի թիվ 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով լիազոր մարմնին<br>2. Հաշվետվությունների ներկայացում ծրագրի բարեգործներին |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

01.03.2023

ՀԱՎԱՍՏՎԱԾ Է ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ